

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

1. Մշակվում են ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների 6 խմբի և մարզի 55 համայնք ներառող միկրոտարածաշրջանային մակարդակի 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը:

2. Աղետի գոտում՝ ՀՀ 2017 թ. պետական բյուջեով նախատեսված 560.0 մլն դրամի հաշվին լուծվել է 86 ընտանիքի (82-ը՝ Գյումրի, 1-ը՝ Սպիտակ, 3-ը՝ գյուղական բնակավայրեր) բնակարանային խնդիր:

3. «Կառուցապատման ներդրումային ծրագրերի մշակում» ծրագրի շրջանակում համակարգվել են հետևյալ ներդրումային ծրագրերը՝

- Երևան քաղաքի 33-րդ թաղամաս
- Երևան քաղաքում հայկական ազգագրական «Նոյ» թաղամաս
- Երևան քաղաքում «Հին Երևան» կառուցապատման ծրագիր:

4. Պետական և մասնավոր վարկային միջոցների հաշվին իրականացվում է 44 կառուցապատման ներդրումային ծրագիր (2017 թ. ընդհանուր կատարողականը շուրջ 111 մլն ԱՄՆ դոլար):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալությամբ՝ լիզինգով, 3-10 տարի մարման ժամկետով, 9 % տոկոսադրույքով, տոկոսադրույքի 7 % կետի սուբսիդավորմամբ տրամադրվել է գյուղատնտեսական տեխնիկա (շուրջ 80 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 44 տրակտոր):

2. Խաղողի և պտղատու այգիներում հակակարկտային ցանցերի ներդրման համար կտրամադրվեն 7 տարի մարման ժամկետով, 2 % տոկոսադրույքով վարկեր:

3. Վարկավորման ժամկետը սահմանվել է մինչև 5 տարի (2 տարվա փոխարեն), գումարը՝ 3-10 մլն դրամ (3 մլն դրամի փոխարեն):

- Սահմանամերձ բնակավայրերի տնտեսվարողներին վարկերը կտրամադրվեն 3 %, իսկ մնացած համայնքներին՝ 5 % տոկոսադրույքով:

4. Կաթիլային ոռոգման համակարգերի վարկերը 2018-2022 թթ. կտրամադրվեն 2 % տոկոսադրույքով՝ 3 տարի մարման ժամկետով:

5. Մինչև 10 հա ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, ինտենսիվ այգիների համար կտրամադրվի վարկի սուբսիդավորում:

6. Ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման պիլոտային ծրագրի շրջանակներում տնտեսվարողներին կտրամադրվեն 150.0 մլն դրամ առավելագույն չափով, մեկ տարի մարման ժամկետով և տարեկան մինչև 12 % տոկոսադրույքով վարկեր, որոնց մինչև 9 % կետը կսուբսիդավորվի:

- 2017թ. սեպտեմբերի 29-ի դրությամբ ներկայացվել է 19 նախնական հայտ՝ 1864.0 մլն դրամի չափով:

7. Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնադրման շրջանակներում ձեռք է բերվել 7 տրակտոր, 7 գութան, 4 շարքացան:

- Ծրագրի շրջանակներում ակնկալվում է մշակել շուրջ 16 հազ. հա հողատարածք, որը կհանդիսանա լրացուցիչ եկամտի աղբյուր:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ

1. Գյումրու «Շիրակ» օդանավակայանում աերոնավիզացիոն ծառայությունների սակագներն իջեցվել են 50 %, օդերևութաբանական ծառայությունների սպասարկման վճարները՝ հանվել:

2. Գյումրու «Շիրակ» օդանավակայանի բարեկարգման և սպասարկման ծառայությունների ընդլայնման շրջանակներում մշակվել է 2018-2021թթ. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի Մաստեր-պլանը՝ Գյումրու «Շիրակ» օդանավակայանում կատարման ենթակա ներդրումների հստակ նկարագիրը (շուրջ 665 մլն ՀՀ դրամի):

3. ՀՀ օդային տարածքում 290 թռիչքային մակարդակից (FL290) բարձր (ժամը 00:00-ից մինչև 06:00) «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace) հայեցակարգի (ARMFRA) ներդրման շրջանակներում մշակվել և հաստատվել է ARMFRA հայեցակարգի աշխատանքային ծրագիրը:

4. ՀՀ օդանավակայանների 2017 թ. հունվար-օգոստոս ամիսներ.

- 2017 թ.՝ ուղևորահոսքը կազմել է 1.667.173 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցելով 25.5 % աճ

- 2017թ.՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորահոսքը կազմել է 1.610.930 մարդ՝ 2016 թ. հետ համեմատաժ՝ գրանցելով 21.9 % աճ

- 2017թ.՝ Գյումրու «Շիրակ» օդանավակայանում ուղևորահոսքը կազմել է 56.243 մարդ, 696.1% գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը (7065 մարդ)

- 2017թ.՝Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում բեռնափոխադրումը կազմել է 14.985 տոննա ապրանք, որը 54 % գերազանցում է 2016թ. ցուցանիշը

- 2017թ.՝ Երևանի «Զվարթնոց» միջազգային և Գյումրու «Շիրակ» օդանավակայաններում գրանցվել է 7157 թռիչք-վայրէջք՝ 2016թ. ցուցանիշը գերազանցելով 22.1 %

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մշակվել են հանքարդյունաբերության ոլորտի կարգավորմանը, բնապահպանական փորձաքննության համակարգի բարելավմանը և պարզեցմանն ուղղված օրենսդրական փաստաթղթեր:

2. Մշակվել է «Սևան» ազգային պարկի բարեփոխումների և զարգացման հայեցակարգի նախագիծը և Սևանա լճի առափնյա տարածքների մասթեր պլանի տեխնիկական առաջադրանքը:

Հայտարարվել է միջազգային մրցույթ:

3. Արարատյան դաշտում լուծարվել է 1 խորքային հոր, 2 խորքային հոր սառեցվել է և 127 խորքային հոր բերվել է փականային ռեժիմի, որոնց արդյունքում խնայվել է 6394.0 լ/վրկ ջրաքանակ, ինչը տարեկան կազմում է 201.6 մլն խոր. մ ջուր:

4. «Դիլիջան» ազգային պարկում պահպանության ռեժիմի արդյունավետության բարձրացման և ապօրինի ծառահատումների կանխարգելման նպատակով մշակվել է փորձնական ծրագիր, որով առավել ռիսկային 3 տեղամասում՝ պահպանությունն իրականացնում է մասնագիտացված պահնորդական կազմակերպություն: Մշակման փուլում է անտառապահպանության ոլորտի բարեփոխման և պատասխանատվության խստացմանն ուղղված օրենսդրական փաթեթը:

5. 2017թ-ին Կանաչ կլիմայական հիմնադրամի հետ ստորագրվել է աշխարհում 10-րդ և Եվրասիայում առաջին դրամաշնորհը՝ 20 մլն ԱՄՆ դոլարի չափով:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

1. «Էներգոհիմպեքս» ՓԲԸ-ի և «Գլոբալ Ինթերնեյշնլ Էներջի» կորպորացիայի միջև ստորագրվել է ՀՀ և Վրաստանի միջև էլեկտրական էներգիայի փոխհոսքեր իրականացնելու մասին պայմանագիրը:
2. 11 ընկերություններ ստացել են մինչև 1 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման լիցենզիա:
3. ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում մինչև 1250 հա, վարձակալության է տրամադրվել «Աքսես Ինֆրա Սենթրալ Էյժա Լիմիթեդ» ընկերությանը: Նախատեսվում է կառուցել մոտ 130 ՄՎտ գումարային հզորությամբ հողմային էլեկտրակայան:
4. ՀՀ էներգետիկայի և «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերության միջև ստորագրվել է ՀՀ-ում 100-150 ՄՎտ հզորությամբ էլեկտրակայանների կառուցման փոխըմբռնման հուշագիրը:
5. Մինչև 150 կՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկայի ոլորտում ինքնավար էներգաարտադրողների քանակը 2017թ. օգոստոս ամսվա դրությամբ կազմում է՝ 120, որից տեխնիկական պայմաններ ստացել են 29-ը (գումարային 1,1 ՄՎտ հզորությամբ):
6. ՀՀ Լոռու մարզում կկառուցվի 76 ՄՎտ դրվածքային հզորությամբ «Շնող» հիդրոէլեկտրակայանը:

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

266. Ծառայության կայքում տեղադրվել է սննդամթերքի ներմուծման ռիսկերի էլեկտրոնային հաշվիչ:

267. 2017 թ. օգոստոսի 1-ից՝ 42 միս և 119 հաց տեղափոխող փոխադրամիջոցներին տրամադրվել են սանիտարական անձնագրեր:

268. Պարտադիր սպանդանոցային ծագում ունեցող մսի ձեռքբերման և իրացման ապահովման նպատակով ծառայությունը ծանուցել է 17 պետական մարմնի և մսի իրացմամբ զբաղվող 613 տնտեսվարողի:

269. Բանկերի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել լիզինգով՝ ջերմային պայմաններն ապահովող մեքենաներ ձեռք բերելու համար:

270. Ստեղծվում է սպանդանոցային ցանց: Ներկա դրությամբ գրանցված է 15 սպանդանոց՝ ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Շիրակի մարզերում և Երևան քաղաքում:

271. Կազմվել է ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը, և ամփոփվել՝ 2016թ. ձկնաբուծական և մեղվաբուծական տնտեսություններում իրականացված մշտադիտարկման պլանով նախատեսված ձկան՝ 150 և մեղրի՝ 130 նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքները:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

272. Ինտերնետից օգտվողների թիվը 2017թ.-ին աճել է 17 %-ով, որը 2014 թ.-ին կազմել է 50.03 %, 2015 թ.-ին՝ 55.29 %, 2016 թ.-ին՝ 60.39 %:

273. Հայաստանում SS ոլորտը շարունակում է զարգանալ տարեկան միջինը 20%-ով.

	2014	2015	2016	2017*
ՀՀ-ում SS ոլորտի ընկերությունների քանակը	396	450	520	570
Ընդհանուր հասույթը, ԱՄՆ մլն դոլար	345	426	510	650
Ընդհանուր հասույթի տարեկան աճը, %	21%	23%	20%	27%

*- կանխատեսում

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Միջոցառման նկարագիր	Իրավական ակտ
<p>1. Քրեականացվել է հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց ապօրինի հարստացումը</p>	<p>«Քրեական օրենսգիրք»</p>
<p>2. Հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձինք պարտավորվում են 2.000.000 դրամը գերազանցող գործարքները կատարել բացառապես անկանխիկ ձևով:</p>	
<p>3. Էականորեն ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց շրջանակը (բոլոր դատախազները, ՊԵԿ-ում բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, քննիչները և ուրիշներ)</p>	<p>«Հանրային ծառայության մասին» օրենք</p>
<p>4. Առաջին անգամ ստեղծվելու է կոռուպցիայի կանխարգելման մարմին՝ անկախության երաշխիքներով:</p>	<p>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենք</p>
<p>5. Սահմանվել են կոռուպցիոն երևույթների մասին բարձրաձայնող անձանց պաշտպանության երաշխիքները:</p>	<p>«Ազդարարման համակարգի մասին» օրենք</p>
<p>6. Պետական մարմինների մի շարք գործառույթներ պատվիրակվել են բանկերին և Հայփոստի մասնաճյուղերին: Ներկայումս ավելի քան 89 օպերատորների կողմից մատուցվում է</p>	<p>Կառավարության</p>

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

շուրջ 67 ծառայություն:

որոշում N 1109-Ն

Միջոցառման նկարագիր	Իրավական ակտ
<p>1. Մարդու իրավունքների պաշտպանության 2017-2019 թթ. ծրագրով սահմանվել է 96 գործողություն՝ կատարման հստակ ժամանակացույցով և պատասխանատու մարմիններով:</p>	<p>Կառավարության որոշում N 483-Ն</p>
<p>2. Հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության սահմանում:</p>	<p>«Փաստաբանության մասին» օրենք</p>
<p>3. Սահմանվել են ԴԱՀԿ-ի կողմից որոշումների ընդունման հստակ և միասնական ավելի սեղմ ժամկետներ, ներդրվել են պատշաճ ծանուցման մեխանիզմներ:</p> <p>3.1. Հստակեցվել է պարտապանի գույքի վրա համաչափ արգելանք դնելու գործընթացը:</p> <p>3.2. Նվազագույնի են հասցվել հարկադիր կատարողների հայեցողական լիազորությունները:</p>	<p>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենք</p>
<p>4. Դատարանների բեռնաթափման նպատակով բանկային ոլորտում կնքվող պայմանագրերի պարտավորությունների կատարումն ապահովվելու է արտադատարանական կարգով, նոտարի միջոցով՝ առանց դատական գործընթացի:</p>	<p>«Նոտարիատի մասին» օրենք</p>
<p>5. Սնանկության գործընթացի բարեփոխում, այդ թվում՝ նախատեսելով կազմակերպությունների առողջացման ծրագրերի գերակայության և սնանկության կառավարիչների պատասխանատվության գործիքակազմ:</p>	<p>«Սնանկության մասին» օրենք</p>
<p>6. Ներդրվել է e-draft.am կայքը՝ իրավական ակտերի պատշաճ հանրային քննարկման ապահովման նպատակով, 6.1 Ներդրվել է e-apostille.am համակարգը, որի արդյունքում ապոստիլի վավերականությունն ստուգվում է վայրկյանների ընթացքում, ինչը նախկինում ամիսներ էր տևում և e-civil</p>	<p>ՀՀ ԱՆ հրաման, Կառավարության N 296-Ն որոշում</p>

համակարգը, որով երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու մասին դիմումներն ընդունվում են առցանց եղանակով:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

1. 2016 թվականի դեկտեմբերի 16-ին Կառավարության նախաձեռնած «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի ընդունմամբ քրեականացվել է ապօրինի հարստացումը, արդյունքում հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք չհիմնավորված էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները, ենթարկվելու են քրեական պատասխանատվության:

2. 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով սահմանվեցին՝

- հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք պարտավոր են մի շարք գործարքներ կատարել բացառապես անկանխիկ ձևով, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 2.000.000 դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

- էականորեն ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը (բոլոր դատախազները, հարկային, մաքսային ծառայությունների, քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչները և ուրիշներ),

3. 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի ապրիլ ամսվանից, և, որի միջոցով առաջին անգամ ստեղծվելու է կոռուպցիայի կանխարգելման մարմին՝ անհրաժեշտ ֆինանսական և օրենսդրական անկախության երաշխիքներով:

4. 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Ազդարարման համակարգի մասին» օրենքը, որի շրջանակներում սահմանվել են կոռուպցիոն երևույթների մասին բարձրաձայնող անձանց պաշտպանության երաշխիքները:

5. 2016 թվականի հոկտեմբերի 27-ի կառավարության որոշմամբ պետական մարմինների մի շարք գործառույթներ պատվիրակվել են

սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին՝ բանկեր, Հայփոստի մասնաճյուղեր: Ներկայումս ավելի քան 89 սպասարկման գրասենյակի օպերատորների կողմից մատուցվում է շուրջ 67 ծառայություն: Շարունակական աշխատանքներ են կատարվում ծառայությունների և օպերատորների շրջանակի ընդլայնման համար:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՌԵԳԻՍՏՐ

1. Մշակվել և շրջանառության մեջ են դրվել իրավաբանական անձանց ռեգիստրի ոլորտի բարեփոխմանն ուղղված մի շարք օրենքների նախագծեր, որոնց ընդունման արդյունքում առավել կպարզեցվի ոլորտում իրականացվող վարչարարությունը, կապահովվի իրավաբանական անձանց գրանցման գործընթացի մատչելիությունը (D.B.I.):

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

1. Ներդրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը: Արդյունքում՝ իրականացվում է իրավական ակտերի պատշաճ հանրային քննարկում, և ցանկացած առաջարկություն ունենում է հստակ արձագանք:

2. Ներդրվել է e-apostille.am համակարգը, որը հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով ընդունելու փաստաթղթերն ապոստիլով վավերացնելու մասին դիմումները և առցանց ստուգելու ապոստիլի վավերականությունը, ինչը նախկինում ամիսներ էր տևում, իսկ ներկայումս այդ գործընթացը կարող է իրականացվել վայրկյանների ընթացքում: Ներդրվել է e-civil համակարգը՝ ինչը հնարավորություն է տալիս ընդունելու երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու մասին դիմումները՝ www.epension.am միասնական սոցիալական պորտալ առցանց դիմում ներկայացնելու միջոցով:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԴԱՀԿ, ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

1. 2017 թ. մայիսի 4-ին հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը, որում սահմանված են 96 գործողություն և յուրաքանչյուր գործողության իրականացման հստակ ժամանակացույցը, չափանիշները, ակնկալվող արդյունքը և պատասխանատու մարմինները:

2. Հասարակության ավելի լայն շերտերին որակյալ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով Հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնություն տրամադրելու ապահովմանն ուղղված օրենքի նախագիծը ս"թ" հուլիսի 7-ին ներկայացվել է Ազգային ժողով:

3. Օրենքների նախագծերի փաթեթով սահմանվել են դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից որոշումների ընդունման հստակ և միասնական ավելի սեղմ ժամկետներ, հստակեցվել են պարտապանի գույքի վրա համաչափ արգելանք դնելու գործընթացը, նվազագույնի են հասցվել հայեցողական լիազորությունները, նախատեսվել են աճուրդի առանձին խնդրահարույց հարցերի կարգավորումները (D.B.I):

4. Դատարանների բեռնաթափման նպատակով Կառավարության հավանությանն է արժանացել նոտարական մակագրության թերթի ինստիտուտի ընդլայնման օրենքի նախագիծը: Առաջարկվող նախագծի նպատակն է բանկային ոլորտում կնքվող պայմանագրերից ծագող պարտավորությունների կատարումն ապահովել արտադատարանական կարգով՝ առանց դատական գործընթացի, ինչն էապես կնպաստի դատարանների բեռնաթափմանը (D.B.I):

ՄՇԱԿՈՒՅԹ

274. Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ըստ որի օտարերկրյա ֆիլմարտադրողները ՀՀ-ում առնվազն 100 մլն դրամ ներդնելու պարագայում իրավունք են ստանում շուկայական գնից 20 % ցածր գնով ձեռք բերելու կինոնկարի արտադրության համար անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ:

275. Մշակվել է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է սահմանել պատմամշակութային ժառանգությանը վերաբերող հասկացությունները, հստակեցնել իրականացվող վարչարարությունը:

276. «Պետություն-մասնավոր հատված» գործընկերության մոդելի շրջանակներում ընդունվել է պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող մշակութային և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական համակարգի ներդրմանն ուղղված Կառավարության որոշումը:

277. ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության 68 ՊՈԱԿ-ները 2017 թ. 1-ին կիսամյակում գրանցել են աճի կայուն տեմպեր, կազմելով 746.666.6 հազ. դրամ՝ 2016 թ. նույն ժամանակահատվածի 608.574.0 հազ. դրամի դիմաց, աճը կազմել է 138.092.6 հազ. դրամ կամ 22.7 %, որից՝ միայն հիմնական գործունեությունից հասույթը՝ 119.110.7 հազ. դրամ:

ՄՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

278. Մշակվել և ընդունվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասայական տարածման 5-ամյա ծրագիր՝ հստակ սահմանված միջոցառումներով և դրանց կատարման ժամկետներով, ինչպես նաև բակային սպորտի զարգացման միջոցառումների ծրագիրը, որի համաձայն մինչև 2017թ. ավարտն առնվազն 50 քաղաքային և գյուղական համայնքում իրականացվելու են խաղահրապարակների և բակերի վերանորոգման աշխատանքներ, կառուցվելու են նոր խաղահրապարակներ՝ հագեցած պարզ տիպի մարզասարքերով:

279. Ընդունվել է Մարզադպրոցների կառավարման և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որի նպատակն է բարեփոխել մանկապատանեկան մարզադպրոցների գործունեության կառավարումն (պետություն-մասնավոր գործընկերություն) ու ուսումնամարզական գործընթացի իրականացումը:

280. Առողջ ապրելակերպի վերաբերյալ քարոզչության և սպորտի մասայականացման ապահովման նպատակով.

- կազմակերպվել է հանրապետական մարզական փառատոն, որն իրականացվել է 48 քաղաքում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում

- 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառում, որին մասնակցել է 1300 դպրոց և շուրջ 13000 աշակերտ, ինչպես նաև հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների «Սպարտակիադա» մարզական միջոցառումը

- Գործարկվել է «Կյանքը՝ սպորտի ռիթմով» նախագիծը որի շրջանակում կազմակերպվում են ամենշաբաթյա անվճար բացօթյա մարզումներ բոլոր ցանկացողների համար՝ առանց տարիքային սահմանափակման:

ՍՓՅՈՒՌՔ

1. Նախարարության պաշտոնական կայքում բացվել է «Ներդրումներ Հայաստանում» բաժին, որտեղ ներկայացված են ներդրումներին վերաբերող ՀՀ օրենսդրությունը, արտոնությունները, բիզնես ծրագրերը և այլ նյութեր (ավելի քան 200 հատ), ինչպես նաև ստեղծվել է աշխատանքային խումբ՝ սփյուռքահայերին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու, բիզնես ծրագրեր առաջարկելու, ներդրումների սահուն իրականացմանն օգնելու համար:

2. Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական շտեմարանում բացվել է «Գործարարներ» բաժինը, որտեղ մուտքագրվել են ավելի քան 1700 սփյուռքահայ գործարարների տվյալներ:

3. Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին (սեպտեմբերի 18-20-ը) մասնակցել է 1.363 հրավիրյալ՝ աշխարհի 71 երկրից: Միաժամանակ՝ սեպտեմբերի 19-20-ը Երևանում տեղի է ունեցել Հայկական առևտրային ցանցերի համաժողով շուրջ 250 սփյուռքահայ գործարարների մասնակացությամբ, որին ներկայացվել են ներդրումային դաշտի բարելավման վերաբերյալ առաջարկները, հարկային նպաստավոր դրույքաչափերը և այլ հնարավորություններ: